

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ  
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**Հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների  
վերապատրաստման դասընթացներ**

**ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ  
(ք. Ջերմուկի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց)**

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Հետազոտական աշխատանք

**Ղեկավար՝ Ա.Ստեփանյան**

**ԵՐԵՎԱՆ 2023**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի գործունեության առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում
2. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունը
3. Օգտագործված գրականություն
4. Եզրակացություններ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում փոխվել են հասարակության արժեքային կողմնորոշիչները, կրթության և դաստիարակության համակարգը վերաիմաստավորել է իր գերակայությունները՝ շեշտադրելով ուսանողակենտրոն մոտեցման, սովորողի անձնային ներուժի զարգացման և մասնագիտական դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու հմտությունների ձևավորման հիմնախնդիրների վրա: Վերջին տասնամյակում կրթության և մասնավորապես մանկավարժության ոլորտում կատարված բարեփոխումներն այսօր պահանջում են մանկավարժի այնպիսի պատրաստվածություն, որտեղ կհամակցվեն հին մանկավարժության լավագույն ավանդույթները և նորի առավելությունները: Ըստ այդմ կրթական ոլորտին անհրաժեշտ են մանկավարժներ, ովքեր բաց են յուրաքանչյուր նորի համար, ընդունակ են արագ հարմարվել մասնագիտական և սոցիալական իրականության բարդ պայմաններին, ինքնուրույն և պատասխանատվությամբ ընդունել որոշումներ, անընդհատ ինքնակատարելագործվել և ինքնակրթվել: Ինչպես ասում է Սելևկոն «...մանկավարժ լինել, նշանակում է ունենալ գիտակցության որոշակի տեսակ, որի օգնությամբ մանկավարժը կարող է այնպես փոխել իրավիճակը, որը կդրդի անձին զարգանալ» [8]:

Ուստի ներկայումս առավել արդիական է դարձել ուսուցչի մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության ձևավորումը, որը հավասարապես վերաբերում է նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտին:

Այսօր անհնար է գտնել մարդկային գործունեության որևէ ոլորտ, որը կապված չէ ֆիզիկական կուլտուրայի հետ, քանի որ ֆիզիկական կուլտուրան համընդհանուր ճանաչում գտած նյութական և հոգևոր արժեքների միագումարն է ողջ հասարակության և առանձին վերցրած յուրաքանչյուր անհատի համար:

Պատահական չէ, որ վերջին տարիներին ֆիզիկական կուլտուրան ավելի հաճախ դիտարկում են ոչ միայն որպես ինքնուրույն սոցիալական ֆենոմեն, այլև՝ որպես անհատի կայուն արժեք: Նման պարագայում անհրաժեշտ է փաստել, որ այսօր կրթության ոլորտում, մասնավորապես հանրակրթական դպրոցում, գործնականորեն չկա ամբողջական ֆիզիկական կուլտուրայի դաս, որը ենթադրում է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության և ֆիզկուլտուրային կրթության զուգահեռ ու միաժամանակյա իրականացում: Լավագույն դեպքում ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներն իրենց ուժերը կենտրոնացնում են աշակերտների ֆիզիկական պատրաստության վրա:

Ուստի, ֆիզիկական դաստիարակության արդի համակարգի զարգացման գործընթացում հատուկ կարևորություն է ձեռք բերում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի մոդեռնացման հիմնահարցը, որի առաջնային բաղադրիչներից է ֆիզիկական կուլտուրայի դասի բովանդակության վերաիմաստավորումը:

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Դպրոցականների ժամանակակից ֆիզիկական դաստիարակության բովանդակությունը կողմնորոշված է դեպի այն գաղափարը, որ դպրոցի շրջանավարտը պետք է կյանք մտնի ոչ միայն բավարար ֆիզիկական պատրաստվածությամբ, այլև ունենա բավականաչափ գիտելիքներ ֆիզիկական կուլտուրայի ոլորտից, ճանաչի սեփական մարմինը և տիրապետի դրա հետ աշխատելու մեթոդներին, ծանոթ լինի առողջության պահպանման ու ամրապնդման, օրգանիզմի օրգան համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացման ուղիներին ու եղանակներին, կարողանա կազմակերպել և գրագետ անցկացնել ֆիզիկական վարժություններով պարապմունքներ<sup>1</sup>: Հենց նման բազմակողմանի զարգացած երիտասարդները պետք է լուծեն այնպիսի բարդ սոցիալ-տնտեսական, բարոյականային և այլ խնդիրներ, ինչպիսիք առանցքային են ներկա հասարակության համար: Դպրոցական ֆիզիկական կուլտուրան այսօր պատասխանատու է աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորման համար: Այս կողմնորոշումը կենսական անհրաժեշտություն է Հայաստանի ներկայիս սերնդի համար՝ ընդդեմ համակարգչայնացման, թմրամոլության, ալկոհոլի և ծխախոտային կախվածության աճող վտանգի:

Ֆիզիկական կուլտուրայի դպրոցական պարապմունքներն աշակերտի մոտ դաստիարակում են ինքնուրույնության, ինքնաքննադատության, ինքնավերլուծության, ինքնագնահատման, ինքնակատարելագործման և ինքնավստահության ձգտում: Աշակերտները սովորում են գնահատել ժամանակը, ճիշտ կազմակերպել օրվա ռեժիմը, առանց որի անհնար է պատկերացնել յուրաքանչյուր մարդու բնականոն կյանքը: Չափազանց կարևոր է, որ սովորողները հասկանան օրգանիզմի վրա կատարվող վարժությունների ազդեցության ու նշանակության մասին և դրա հիման վրա ընկալեն տարբեր շարժումների յուրացման միջոցները: Հենց այդտեղ է նշված կարողությունների ձևավորման ուղին: Դպրոցականներին անհրաժեշտ է ոչ միայն ուսուցանել այս կամ այն կարողությունները և հմտությունները, այլև պարտադիր՝ ինչպես սովորել: Ի վերջո, առանց ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության դրան հասնելն անհնար է<sup>2</sup>:

Հետևաբար, հանրակրթական դպրոցում ֆիզիկական կուլտուրայի մանկավարժական գործընթացի մոդեռնացման կարևորագույն պայմաններից է պարապմունքների ընթացքում ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեությունը, ինչպես նաև ուսուցման և դաստիարակության գործընթացի անցումը դեպի մարդասիրության և ազատականացման, որոնք իրականացվում են սովորողների

<sup>1</sup> Давыдова С. В. Требования к современному уроку физической культуры в условиях ФГОС // Проблемы и перспективы развития образования: материалы VIII Межд. науч. конф.-Кр.:Новация,2016.-с.142-144.-URL <https://moluch.ru/conf/ped/archive/187/9501/>

փորձի և նվաճումների մակարդակին, նրանց հետաքրքրություններին և հակումներին համապատասխան:

Ժամանակակից դպրոցում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բովանդակությունը պետք է բխի հետևյալ սկզբունքներից.

– Ֆիզիկական կուլտուրան որպես աշակերտների բազմակողմանի ֆիզիկական զարգացման միջոց՝ հասարակության պահանջմունքներին համապատասխան:

– Ֆիզիկական կուլտուրան որպես դպրոցականների առողջ կենսակերպի կազմակերպման, առողջության ամրապնդման և կյանքի որակի բարելավման միջոց:

– Ֆիզիկական կուլտուրան երեխաներին դեպի հասարակական կյանք, սեփական դիրքորոշում ունենալու, բազմազան աշխատանքային, ֆիզկուլտուրային-մարզական և մշակութային միջոցառումներում ակտիվորեն ներգրավման միջոց:

– Ֆիզիկական կուլտուրան որպես ինքնուրույն պարապմունքների կազմակերպման և անցկացման, առողջ ապրելակերպի վարման, շարժողական ընդունակությունների մշակման և մարմնակազմության ամրապնդման համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման միջոց:

– Ֆիզիկական կուլտուրան որպես ստեղծագործական մտածողության զարգացման, միջանձնային շփումների և հաղորդակցումների ձևերի ծանոթացման, սեփական անձի և շրջապատի նկատմամբ հարգանքի դաստիարակման, անհատի ինքնաարտահայտման և ինքնակայացման ձևավորման միջոց:

Այս ամենը շեշտադրում են ֆիզիկական կուլտուրայի առանձնահատուկ կարևոր դերը՝ դպրոցականների անհատականության, նրանց հետաքրքրությունների և ստեղծագործական կարողությունների ձևավորման, շարժողական ընդունակությունների մշակման և հոգեֆիզիոլոգիական որակների ամրապնդման, աշակերտների առողջության պահպանման և հիվանդությունների կանխարգելման գործում: Այսպիսով, ֆիզիկական կուլտուրան ֆիզիկականի և հոգևորի զարգացումն է մարդու մեջ: Այն միաժամանակ և՛ ապրելաձև է, և՛ անհատականության լիարժեք զարգացման միջոց:

Ուստի, հանրակրթական դպրոցի ծրագրերի կառուցվածքում ֆիզիկական կուլտուրան պետք է առաջատար տեղ զբաղեցնի այլ առարկաների կողքին՝ նպաստելով ընդհանուր մանկավարժական կարևոր խնդիրների լուծմանը: Ֆիզիկական կուլտուրան պետք է հանդես գա ոչ միայն որպես ուսումնական առարկա, այլև դառնա *կենսակերպ երեխաների* համար:

Այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է նորացնել մանկավարժական գործունեության ավանդական ձևերը, մեթոդներն ու եղանակները, որոնց կիրառմամբ ֆիզիկական կուլտուրան դպրոցական կրթության մեջ կմնա միայն որպես ֆիզիկական պատրաստվածության գործընթաց և դպրոցականների

առողջության ամրապնդման միջոց: Լուծելով շարժողական կարողությունների ու հմտությունների ձևավորման և շարժողական ընդունակությունների մշակման ավանդական խնդիրները՝ շատ ուսուցիչներ հաճախ մոռանում են աշակերտների մոտ ֆիզիկական վարժություններով պարապմունքների և ֆիզիկական կուլտուրայի դասերի նկատմամբ դրական վերաբերմունք և հետաքրքրություն ձևավորելու մասին: Այդ ամենը պետք է կատարվի հետաքրքրի տեղեկությունների հաղորդմամբ, խիստ աշխատակարգերից հեռացմամբ, դասի հուզական հագեցվածության բարձրացմամբ, կիրառվող միջոցների և մեթոդների բազմազանությամբ:

Այսպիսով, կրթական հարացույցի կատարելագործումը բերում է ֆիզիկական կուլտուրայի կարգավիճակի փոփոխման՝ որպես հումանիտար ուսումնական առարկա: Սրանով է պայմանավորված ֆիզկուլտուրային կրթության բովանդակության մոդեռնացումը և դրանով հանդերձ էականորեն փոխվում են ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի դիրքը, նրա պրոֆեսիոնալ անձնային հմտությունների վերաբերյալ առկա հայացքը՝ վերաիմաստավորելով և վերակառուցելով նրա պրոֆեսիոնալ գործունեության բնույթը:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և աշակերտների միջև գործնական շփումը կազմակերպելու և դրա դաստիարակչական ազդեցությունն ապահովելու համար անհրաժեշտ է գտնել համապատասխան եզրագիծը: Նախ և առաջ, ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի ընթացքում պետք է իրականացվի սովորողի և ուսուցչի համատեղ ստեղծագործական ուսումնական գործունեություն: Ֆիզկուլտուրային ճանաչողական գործունեությունը խթանվում է տարատեսակ խնդիրների առաջադրմամբ, որոնք սովորողները լուծում են համատեղ աշխատանքի ընթացքում: Ուսուցչի գլխավոր խնդիրներից է սովորողների դրդապատճառային միջավայրի ստեղծումը: Գաղտնիք չէ, որ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում միայն դրական դրդապատճառների դեպքում կարելի է ակնկալել շոշափելի արդյունքներ:

Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում դրդապատճառների առաջացման միջոցներից է ֆիզկուլտուրային կրթության որակի գնահատման համակարգը: Առաջադիմության, հաճախելիության և ֆիզիկական կուլտուրայի դասերին ակտիվության բարձրացման համար նպատակային է կիրառել գնահատման վարկանիշային (միավորային) համակարգը, որը հիմնականում ունի խրախուսական դեր: Այսպես, աշակերտը նշված ժամանակահատվածում (ամիս, կիսամյակ, ուսումնական տարի) տարբեր առաջադրանքների կատարման, մրցումների, տարբեր մարզական և հասարակական միջոցառումների կազմակերպման և մասնակցման համար հավաքում է որոշակի միավորներ, որը հավելվում է նրա ամփոփիչ գնահատականին: Առարկայի առաջադիմությունը որոշվում է նաև ձեռք բերված տեսական գիտելիքների խորությամբ, դասերի ընթացքում աշխատունակության բարձր մակարդակով, արտադասարանական և արտադպրոցական մարզական միջոցառումների մասնակցությամբ:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից կիսամյակային կամ ամփոփիչ գնահատականի նշանակման ժամանակ անհրաժեշտ է ոչ միայն հաշվառել ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, այլև ֆիզիկական վարժություններով պարապելու սովորողների կարողությունները և հմտությունները, առողջ ապրելակերպի կանոնների պահպանումը: Դպրոցականների ֆիզիկական պատրաստվածությունը նպատակահարմար չէ գնահատել միայն բացարձակ տվյալներով (նորմատիվների կատարում կամ չկատարում), այլ թեստավորման հենքային արդյունքների համեմատ շարժողական թեստերի արդյունքների աճով: Սովորողների շարժողական ցուցանիշների աճի տեղաշարժերը միաժամանակ նաև նրանց անհատական հնարավորությունների ցուցանիշներ են:

Այն աշակերտներին, որոնք բժշկական ցուցումներով ազատված են ֆիզիկական կուլտուրայի դասերից, նպատակահարմար է հանձնարարություններ առաջադրել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի տեսական բաղադրիչից: Աշակերտները կգնահատվեն բանավոր պատասխանների և ռեֆերատների հիման վրա: Այսպիսով, բոլոր աշակերտները, անկախ բժշկական խմբից, կարող են գնահատվել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից:

Ֆիզիկական կուլտուրայի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է լավ գիտենա, որ ժամանակակից դասը կողմնորոշված է սովորողների հանդեպ անհատական մոտեցմամբ, որտեղ մեծ ուշադրություն է դարձվում յուրաքանչյուր դպրոցականի հոգեբանական, ինտելեկտուալ և շարժողական բաղադրիչներին: Նման մոտեցումը թույլ է տալիս լիարժեք լուծել ֆիզիկական դաստիարակության առջև դրված ժամանակակից խնդիրները: Այստեղ գլխավորը բոլորին միևնույն պահանջներն առաջադրելը չէ, այլ, որպես կանոն, հարկավոր է դրսևորել մանկավարժական մոտեցում՝ անդադար ուշադրություն դարձնել աշակերտի անձի, նրա հնարավորությունների և հակումների, բնական տվյալների և պատրաստության վրա: Ընդ որում, ժամանակակից դասը կողմնորոշված է ոչ միայն դեպի ֆիզիկական պատրաստությանը կամ ֆիզիկական զարգացման ցուցանիշների բարելավմանը, այլև սովորողների անձնական հնարավորություններին, նրանց կողմից ուսումնական նյութի անհատական ընկալմանը:


Ուսուցչի մասնագիտական վարպետության վառ ապացույց է միջանձնային հարաբերությունների ձևավորման տարատեսակ կապերի կիրառումը: Նրա պրոֆեսիոնալ վարպետության հաջորդ կարևոր ցուցանիշն է մանկավարժական հաղորդակցությունը, որը ենթադրում է աշխատելու կարողություն՝ ինչպես դասարանային և մարզական խմբերի հետ, այնպես էլ սովորողների մեծ խմբերի հետ զանգվածային մարզական միջոցառումների, առողջության օրերի, մարզական տոների և երեկոյաների անցկացման ժամանակ: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի բազմաբնույթ գործունեության մեջ առանձնացնում ենք նրա մանկավարժական աշխատանքի հետևյալ գործառույթները (նկար 1), բացի դրանից, չափորոշչային

փաստաթղթերի համաձայն, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է պատրաստ լինի իրականացնելու հետևյալ գործունեության տեսակները (նկար 2):


Ներկայումս ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների գործունեությունը հիմնված է այնպիսի կարևորագույն խնդիրների լուծման վրա, ինչպիսիք են աշակերտի ֆիզիկական և հոգևոր կատարելագործման արժեհամակարգի ձևավորումը, ֆիզիկական վարժությունների և ընտրված մարզաձևի կանոնավոր պարապմունքների պահանջմունքների ամրապնդումը, բարոյական և կամային հատկանիշների դաստիարակումը, մարդասիրական հարաբերությունների ձևավորումը և աշակերտների ու մանկավարժների միջև հաղորդակցման փորձի ձեռքբերումը:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը, ով օժտված է մանկավարժական բարձր կուլտուրայով, աշխատում է ինքնակատարելագործվել՝ սեփական անձի ինքնակրթության միջոցով՝ հանդիսանալով աշակերտների դաստիարակության կարևոր միջոց: Այս ուղղվածությամբ շարժումը ֆիզիկական կուլտուրան դարձնում է անհատի մշտապես կատարելագործման միջոց, ինչպես երեխայի, այնպես էլ ուսուցչի համար:

Նկար 1.



Նկար 2.





Այսպիսով, դպրոցականների հետ տարվող աշխատանքներում, անհրաժեշտ են նոր մոտեցումների, հայեցակարգերի և բովանդակային ձևերի ստեղծագործական որոնումներ:

Ըստ այդմ, հանրակրթական դպրոցների ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների գլխավոր խնդիրներից պետք է դառնա աշակերտների մոտ դրական վերաբերմունքի ձևավորումը ֆիզիկական կուլտուրայի նկատմամբ: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է օգտագործել հասանելի եղանակների և մեթոդների ողջ բազմազանությունը, որոնք, ընդհանուր առմամբ, պետք է ուղղված լինեն դպրոցականների շարժողական ակտիվության բարձրացմանը:

Աշակերտների ակտիվությունը ֆիզիկական կուլտուրայի դասերին պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնցից են՝ դասի խնդիրների ճիշտ հարցադրումը, բարենպաստ հուզական մթնոլորտի ստեղծումը, օպտիմալ բեռնվածությունը դասաժամին:

Բարենպաստ հուզական մթնոլորտի ստեղծումն ունի բացառիկ նշանակություն: Որպես կանոն, այն ձևավորվում է մինչև դասի սկիզբը և պետք է պահպանվի ողջ դասի ընթացքում, սակայն հուզական մթնոլորտը պարապմունքների ընթացքում կարող է փոփոխվել: Դա կախված է աշակերտների ինքնազգացողությունից, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի և, մասնավորապես, կատարվող ֆիզիկական վարժությունների հանդեպ նրանց վերաբերմունքից, կոնկրետ դասի նկատմամբ հետաքրքրվածությունից, ինչպես նաև ուսուցչի անձի, նրա մասնագիտական վարպետության մակարդակից: Ֆիզիկական կուլտուրայի դասը միշտ պարգևում է ուրախություն և բավարարվածության զգացում: Եթե աշակերտները գտնվում են մշտական շարժման մեջ և չեն ձանձրանում նստարաններին նստած, եթե ուսուցչին տեսնում են լավ տրամադրությամբ, ընկալում են նրա կատակները, ապա ակնհայտորեն զգում են իրենց աշխատանքի արդյունքները: Շատ կարևոր է, որ ուսուցչի խստությունը, գործողությունների ճշգրտությունն ու հստակությունը հերթագայվեն ժպիտներով, աշակերտներին հաջողությունների ժամանակ խրախուսելով, իսկ անհաջողությունների դեպքում՝ քաջալերելով:

Գոյություն ունեն դասը հետաքրքիր վարելու տարբեր եղանակներ.

- օգտագործել ժամանակակից մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- կիրառել պարապմունքների ընդհանուր, շրջանաձև կամ խմբային կազմակերպման ձևեր,
- ներառել ֆիզիկական վարժությունների նոր ձևեր,
- փոխել դասի իրավիճակային պայմանները (օրինակ՝ մարզադահլիճից տեղափոխվել բացօթյա մարզահրապարակ),

• կիրառել խաղային և մրցակցային մեթոդներ, շարժախաղեր և մարզախաղեր՝ շարժողական ակտիվությունը բարձրացնելու և ֆիզիկական կուլտուրայի դասերից բավականություն ստանալու նպատակով:

Շարժախաղը կրտսեր տարիքի դպրոցականների համար ոչ միայն զվարճանք է, այլև զարգացման միջոց: Շարժողական ակտիվության դրսևորումներ պահանջող խաղերի օգնությամբ աշակերտները յուրացնում են շարժումների ռացիոնալ ձևերի կանոններն ու չափանիշները, զարգացնում են բարոյականային հատկանիշները, մշակում շարժողական ընդունակությունները և հաղորդակցական կարողությունները: Կրտսեր դպրոցականների հետ կարևոր է դասերի ընթացքում կիրառել սյուժետային խաղեր, ընդ որում, ուսուցիչը, աշակերտների գործունեության համար որոշակի խաղային սյուժե ստեղծելով, դասի բովանդակության մեջ ընդգրկում է ծրագրային ուսումնական նյութը: Կիրառելով այս մեթոդը՝ ուսուցիչը նույնպես պետք է դառնա խաղի մասնակից, հավատա իր ստեղծած կերպարների իրական լինելուն և կատարի սյուժեին համապատասխան դերը: Բարձր դասարաններում անհրաժեշտ է կիրառել մարզախաղեր, որոնք առանձնանում են առավել մեծ իրատեսությամբ: Դրանք սկզբնական շրջանում կարող են լինել պարզեցված կանոններով, այնուհետև՝ լիովին համապատասխանելով իրական պահանջներին: Մրցակցային մեթոդի հիմքը կազմում են մրցումների, մրցակցության ռացիոնալ կազմակերպված գործընթացը, պայքարն առաջնության և բարձր նվաճումների համար: Աշակերտը մրցում է ոչ միայն մյուսների, այլև ինքն իր հետ՝ ձգտելով գերազանցել սեփական մարզական արդյունքը կամ նախապատրաստական վարժությունների ցուցանիշները: Մրցակցային մեթոդն ուժեղացնում է ֆիզիկական վարժությունների ազդեցությունը և նպաստում է օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների առավելագույն դրսևորմանը՝ դրանով նպաստելով դրանց զարգացմանը:

Շարժախաղերը և մարզախաղերը ֆիզիկական կուլտուրայի դասերին զարգացնում են միասնականության և համագործակցության ոգին:

Այսպիսով, ֆիզիկական կուլտուրան, որպես ընդհանուր մշակույթի մաս, նպաստում է դպրոցականների ընդհանուր զարգացմանը և նախապատրաստում է նրանց հետագա ինքնուրույն կյանքին, իսկ սպորտը «կյանքի դպրոց» է, քանի որ սպորտում սովորում են ոչ միայն խաղալ՝ մարզական գործունեության այս կամ այն ձևում, այլև ինտեգրվում են թիմային և համատեղ աշխատանքում, սովորում են պարտվել և հաղթել, մշակել մարտավարություն և գործելակերպ, կառուցել հարաբերություններ մրցակիցների և թիմակիցների հետ, ընդունել ինքնուրույն որոշումներ ոչ միայն խաղի մեջ, այլև կյանքում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքները ձևավորում են առողջ պատվախնդրություն, սեփական արժանապատվության զգացում, հարվածն ընդունելու կարողություն, (ընդ որում՝ ոչ միայն մարզադահլիճում), արթնացնում են ազնիվ մրցակցության ոգի, որն առանձնապես կարևոր է ժամանակակից աճող սերնդի համար:

Դպրոցական ֆիզիկական կուլտուրան հիմք է անհատական այնպիսի հատկանիշների ձևավորման համար, ինչպիսիք են աշխատասիրությունը, լավատեսական ակտիվությունը, մյուսներից հետ չմնալու ձգտումը: Այն արդյունավետ միջոց է դպրոցականների կառուցողական, ստեղծագործական էներգիան բացահայտելու և ճիշտ ուղղորդելու համար: Ընդ որում, ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի վարքագիծը, գիտելիքները, կարողությունները և անձնական օրինակն աշակերտների համար ավելի կարևոր կողմնորոշիչներ են, քան խրատներն ու հորդորները: Եթե ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը կարողանա սովորողների մոտ ձևավորել մշտապես ինքնակրթվելու և ինքնակատարելագործվելու պահանջմունք, ապա նրանց համար հեշտ կլինի ճանաչել և ընդունել սոցիալական այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ընկերությունը, իրավահավասարությունը, համախմբվածությունը, արդարությունը, գեղեցկությունը, ազատությունը և երջանկությունը:

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ**

Կրթական հարացույցի կատարելագործումը բերում է ֆիզիկական կուլտուրայի կարգավիճակի փոփոխման՝ որպես հումանիտար ուսումնական առարկայի: Սրանով է պայմանավորված ֆիզկուլտուրային կրթության բովանդակության արդիականացումը և դրանով հանդերձ էականորեն փոխվում են ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի դիրքը, նրա պրոֆեսիոնալ անձնային հմտությունների վերաբերյալ առկա հայացքը՝ վերախմաստավորելով և վերակառուցելով նրա պրոֆեսիոնալ գործունեության բնույթը {10, 12}:

Նման պարագայում ֆիզկուլտուրային կրթության բովանդակության հիմնական արդիականացնողը համարվում է ուսուցիչը, հատկապես նրա պրոֆեսիոնալիզմը և կոմպետենտությունը կարող են ապահովել անհրաժեշտ արդյունքների ձեռք բերումը: Ուստի ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը դառնում է ֆիզկուլտուրային կրթության արդիականացված բովանդակության կրողը, մասնագիտական գործունեության արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանների կազմակերպիչը:

Ելնելով վերոնշյալից ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչն իր մասնագիտական գործունեությունը պետք է կառուցի ժամանակակից պահանջներին համապատասխան՝ տիրապետելով մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության բովանդակությանը: Այսպիսով, ֆիզիկական կուլտուրայի ոլորտում ուսումնադաստիարակչական գործընթացի արդիականացման առաջնային դերը պատկանում է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչին:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի կրթությունը նոր բովանդակություն է ստանում կոմպետենտային մոտեցման տեսանկյունից, քանի որ ուսումնական գործընթացը ներկայացնում է կրթական, դաստիարակչական, առողջարարական, ճանաչողական, սոցիալական և խաղային գործունեության համատեքստում:

Կրթության մոդերնիզացմանն ուղղված գիտական հետազոտություններում և հրապարակումներում հիմնական շեշտադրումները կատարվում են «կոմպետենցիա» և «կոմպետենտություն» հասկացությունների վրա, որոնք այսօր չունեն միանշանակ սահմանում և հիմնականում մեկնաբանվում են՝ ելնելով հեղինակի դիրքորոշումից:

Ըստ Ա.Ս. Բուդաղյանի և Ս.Բ. Կարաբեկյանի՝ կոմպետենցիան իրենից ներկայացնում է գիտելիքի և իմացության, միջանձնային, մտավոր և գործնական հմտությունների, ինչպես նաև բարոյական արժեքներ դավանելու դինամիկ համակցություն:

Հ.Հ. Պետրոսյանն իր աշխատությունում առանձնացնում է մասնագիտական կոմպետենտության հետևյալ բաղադրիչները՝ *նախագծային և պլանավորման, ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, տեխնոլոգիական, արժևորման և գնահատման, կազմակերպչական, կառավարչական, գիտահետազոտական:*

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունն, ըստ Վ.Ա. Սլաստենինի և համահեղինակների, բարդ կազմավորում է, որն ընդգրկում է անհատի գիտելիքների, կարողությունների, հատկանիշների և կարողությունների ամբողջությունը՝ դրանով ապահովելով կրթական գործընթացի և որևէ առարկայի դասավանդման արդյունավետ և օպտիմալ կազմակերպումը: Նրանք տարբերակում են մասնագիտական կոմպետենտության հետևյալ տեսակները՝ *հատուկ, սոցիալական, անձնային, անհատական*:

Ա.Ս. Բելկինի և Վ.Վ. Նեստերովի տեսանկյունից, մանկավարժական կոմպետենտությունը համապատասխան կոմպետենցիաների իրականացումն ապահովող մասնագիտական և անհատական կարողությունների ամբողջություն է:

Նրանց աշխատությունում մասնագիտական կոմպետենտության կառուցվածքը ներկայացվում է մի շարք կոմպետենցիաների հաջորդականությամբ՝ *կոգնիտիվ, հոգեբանական, հաղորդակցական, հոնորոական, մասնագիտական-տեխնոլոգիական, մոնիտորինգային*:

Վերլուծելով և ամփոփելով հետազոտվող ոլորտի մի շարք առաջատար մասնագետների մոտեցումները և մեկնաբանումները կարող ենք փաստել, որ կոմպետենցիան մասնագետի կրթական պատրաստությանը նախօրոք առաջադրված սոցիալական պահանջն է, չափանիշը, որն անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական ոլորտում որակապես և արդյունավետ գործունեություն ծավալելու համար, իսկ կոմպետենտությունը գործունեության սուբյեկտի ձեռքբերումն է, որը ենթադրում է բազմակողմանի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ընդունակությունների և անձնային որակների դրսևորում: Այն կոնկրետ անձի կողմից կոմպետենցիաների համակարգի յուրացումն է: Այսինքն՝ կոմպետենտությունը բնութագրում է գործունեության սուբյեկտին, իսկ կոմպետենցիաները վերաբերում են գործունեությանը:

Ուստի, կրթության կոմպետենտային մոդելը նկարագրում է, թե ինչ կոմպետենցիաների պետք է տիրապետի բուհի շրջանավարտը, ինչ գործառույթներ պետք է կարողանա իրականացնի և փոփոխվող աշխաշուկայի պայմաններում պատրաստության ինչ մակարդակ պետք է ունենա կոնկրետ մասնագիտական պարտականությունների կատարման համար:

Այսպիսով՝ կոմպետենտային կողմնորոշված կրթությունը կրթական համակարգի ադեկվատ ռեակցիան է սոցիալական պատվերին համապատասխան:


Դիտարկելով վերը նշվածներն անհրաժեշտ է փաստել, որ ժամանակակից մասնագիտական կրթության համակարգն ամբողջովին պետք է հիմնվի կոմպետենտային մոտեցման վրա:

Այս ամենից ելնելով մեզ համար առանցքային է դառնում ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության կառուցվածքը: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մանկավարժական գործունեությունն ունի իր յուրահատկությունը՝ կապված նրա իրականացման հետ. բացի մանկավարժական

գործունեության հիմնական (կառուցողական, կազմակերպչական, հաղորդակցական և գնուստիկական) կողմերից, առկա է նաև նրա շարժողական բաղադրիչը {3}:

Բացի դրանից, չափորոշչային փաստաթղթերի համաձայն, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է պատրաստ լինի իրականացնելու ուսումնադաստիարակչական, սոցիալ-մանկավարժական, մշակութային, գիտամեթոդական, կազմակերպչական-ղեկավարման, ֆիզկուլտուրային մարզական և առողջարարական-ռեկրեացիոն գործունեություն:

Ուսումնասիրելով մանկավարժական-մասնագիտական կոմպետենտության կառուցվածքի նկատմամբ տարբեր մոտեցումներ, առաջարկում ենք ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության մեր կողմից մշակված մոդելը (նկար 1):



Նկար. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կոմպետենտության մոդելը

Առաջարկվող կոմպետենտությունը ներառում է հետևյալ բաղադրիչները.

**Կոգնիտիվ** կոմպետենցիան արտահայտվում է «Ֆիզիկական կուլտուրա» ուսումնական առարկայի բովանդակության, սովորողների ֆիզիկական ու հոգեբանական զարգացման օրինաչափությունների ճանաչման, ինչպես նաև ուսուցչի ինքնագիտակցության միջոցով: Այն իր մեջ ներառում է դիագնոստիկայի ու կանխատեսման կարողությունները՝ աշակերտների ֆիզիկական զարգացման ու ֆիզիկական պատրաստվածության, ինչպես նաև ուսուցման ու դաստիարակության մակարդակների որոշման համար: Կոգնիտիվ կոմպետենցիան ենթադրում է, որ ուսուցիչը պետք է ունենա հոգեբանամանկավարժական գիտելիքներ, ինչպես նաև

գիտելիքներ դասավանդվող առարկայի ոլորտից (ֆիզիկական դաստիարակության տեսության, օլիմպիական շարժման, շարժողական գործունեության բժշկակենսաբանական, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմամշակութային հիմունքների և անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ), պետք է լինի փորձառու՝ սովորողների մոտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձևավորելու համար:

**Նախագծային** կոմպետենցիան ներառում է դասի/պարապմունքի, արտադասարանական և զանգվածային միջոցառումների բազմամակարդակ առաջադրանքների նախագծման կարողությունները, այսինքն այս կոմպետենցիան առաջիկա գործունեության պլանավորումն ու մոդելավորումն է, ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցների, մեթոդների, ձևերի և բովանդակության ընտրությունն ու կառուցումն է, առաջադրված խնդիրների փուլայնության որոշումը:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի **կազմակերպչական** կոմպետենցիան արտահայտվում է ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպչական կարողություններով, մարզական գործունեությունում սովորողների ընդգրկվածության մակարդակով և ուսուցչի գործելակերպով: Օրինակ, դասի ընթացքում ուսումնական նյութի ճիշտ մատուցումը ենթադրում է՝ աշակերտների առջև կոնկրետ խնդիրների առաջադրում և դրանց լուծման նշանակության բացահայտում, ֆիզիկական վարժությունների ցուցադրություն և մեկնաբանություն, օգնության ցուցաբերում դպրոցականներին՝ վարժությունների կատարման ընթացքում: Այս կոմպետենցիայի իրագործումն աշակերտների մոտ ապահովում է նրանց ուշադրության կենտրոնացում, շարման և շարափոխման հստակ կատարում, նախապատրաստում շարժողական գործունեության կատարմանը, վարժությունների ամրապնդում, ֆիզիկական բեռնվածության չափավորում:

Ուսուցիչն իր վարքագիծը կառուցում է՝ ուշադրության առավել նպատակահարմար բաշխման, աշակերտների հետ հաղորդակցման համապատասխան ձայներանգի ընտրության, սեփական գործողությունները վերահսկելու անհրաժեշտությունից ելնելով: Աշակերտների ինքնուրույն գործունեության ճիշտ կազմակերպումն ուսուցչի փորձառությունը բնութագրող հատկանիշ է: Իր գործի վարպետ հանդիսացող ուսուցչին բնորոշ է նաև ինքնակազմակերպվածության բարձր մակարդակը:

Ուսուցչի, այդ թվում նաև ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտությունը պատկանում է «խոսքային բարձր պատասխանատվություն» ներկայացնող մասնագիտությունների թվին, որոնց մեջ պրոֆեսիոնալիզմի պարտադիր նախապայման է հանդիսանում **հաղորդակցական** կոմպետենցիան, որի մեջ ներառվում է *կոնֆլիկտաբանական* (կոնֆլիկտների (ընդհարումների) նկատմամբ կառուցողական վերաբերմունքի կարողությունը, դրանց վերլուծության և լուծման միջոցներին տիրապետումը) և *հոնգորական* (խոսքային փոխներգործության կուլտուրա) բաղադրիչները:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական խոսքն ուսումնամարզական դասընթացների շրջանակներում ունի իր առանձնահատկությունները՝ կապված խոսքաշարժիչ կոորդինացիայի, ուսուցչի հստակ, կտրուկ և գործուն խոսքի կարևորության, ոչ վերբալ միջոցների ակտիվ օգտագործման հետ: Դա կարևոր է հատկապես մեծ մարզադահլիճների, լողավազանների, մարզասրահների ակուստիկայի պայմաններում:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մանկավարժական հաղորդակցությունը ենթադրում է աշխատելու հմտություն ինչպես դասարանական և մարզական խմբերի, այնպես էլ՝ մեծ կոլեկտիվների հետ (զանգվածային մարզական միջոցառումներ, առողջության օրեր, մարզական տոներ, երեկոներ): Այս հմտությունները ձևավորվում են աշխատանքային գործունեության ողջ ընթացքում և ներառում են աշակերտների, նրանց ծնողների, ուսուցիչների և դպրոցի ղեկավարության, հասարակական և այլ կազմակերպությունների հետ հաղորդակցվելու հմտություններ:

Հաղորդակցական կոմպետենցիան իր մեջ ներառում է նաև ֆիզիկական վարժությունների ուսուցման գործընթացում օպտիմալ քանակությամբ և որակով օրինակներ բերելու, ինչպես նաև մարզական խմբում, կոլեկտիվում դրական հաղորդակցություն ստեղծելու կարողությունը:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի **հետազոտական** կոմպետենցիան կապված է ճանաչողական խնդիրների լուծման, ոչ ստանդարտ լուծումների որոնման, ինչպես նաև նորարարական ու ստեղծագործական գործունեության իրականացման կարողությունն ապահովող տեղեկատվության հավաքման ու մշակման հետ: Այն արտահայտվում է հետևյալ հմտություններում. խնդիրների ձևակերպում և դրանց լուծման համար էվրիստիկական մեթոդների կիրառում, տեսական գիտելիքների վերլուծություն, մեկնաբանություն և ներդրում հետազոտական գործունեությունում, գրական աղբյուրների հետ աշխատելու կարողություն, սեփական հետազոտական գործունեության հաջող կազմակերպում, վիճակագրական տվյալների հավաքագրում և մշակում, հետազոտությունների արդյունքների ձևակերպում, ստացված արդյունքների ներդրում գործնական աշխատանքում, հետազոտությունների որակի գնահատում {10}:

**Շարժողական** կոմպետենցիան հանդիսանում է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի աշխատանքի առանձնահատկությունը: Այն որոշվում է հենց առարկայի բովանդակությամբ և յուրահատկությամբ, որը ներառում է ինչպես ֆիզիկական կուլտուրայի դասերը, այնպես էլ արտադասարանական, զանգվածային մարզական միջոցառումները, առողջարարական-ռեկրեացիոն գործունեությունը: Քանի որ պարապմունքները դինամիկ են և հազեցած բազմապիսի շարժումներով, ուսուցիչը պետք է ռացիոնալ տեղ ընտրի մարզադահլիճում (մարզահրապարակում), ժամանակին կազմակերպի տեղափոխությունները, լավագույն կերպով տիրապետի ֆիզիկական վարժությունների տեխնիկային, օգնության ցուցաբերման և դպրոցականների անվտանգության ապահովման եղանակներին:



Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի աշխատանքի կարևոր մաս է կազմում մարզագույքի և սարքավորումների պատրաստումն ու վերանորոգումը, խաղահրապարակների, վազքուղիների նախապատրաստումը, ինչն անմիջականորեն կապված է ուսուցչի տնտեսական գործառույթների կատարման հետ {11}:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական-մանկավարժական կառուցվածքում մասնագիտական **ինքնակատարելագործման** կոմպետենցիան իրենից ներկայացնում է մասնագիտական կարողությունների համակարգ, որն ապահովում է ուսուցչի աշխատանքի արդյունավետության անընդհատ աճ և շարունակական զարգացում մասնագիտական ոլորտում:

Քանի որ կրթական տարածքը դիտարկվում է որպես համընդհանուր տեղեկատվական հեռահաղորդակցական տարածության մաս և տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն ունեն վերափոխելու ինչպես ուսումնական գործընթացի մոդելը, այնպես էլ ուսուցանողի և ուսուցանվողի գործունեությունը, մենք կարևորում ենք ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի **տեղեկատվական** կոմպետենցիան, որի տակ հիմնականում պետք է հասկանալ համակարգչի տիրապետման հմտությունը՝ ծրագրային ապահովման, ինտերնետի օգտագործման, տեղեկատվական աղբյուրների հետ աշխատելու հմտություններ, տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով մասնագիտական հաղորդակցություն, փորձի փոխանակում և այլն: Այս կոմպետենցիան ներառում է *թվային, ռեսուրսային և տեխնոլոգիական* բաղադրիչները: **Թվային** բաղադրիչը միավորում է համակարգչի և համացանցի մասին ուսուցչի գիտելիքները: Շատ ուսուցիչներ կարող են օգտվել համակարգչից, սակայն դժվարություններ ունեն համացանցից օգտվելիս: **Ռեսուրսային** բաղադրիչը նշանակում է անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու և օգտագործելու կարողություն, իսկ **տեխնոլոգիական** բաղադրիչը ենթադրում է, որ ուսուցիչը պետք է կարողանա ոչ միայն օգտվել համակարգչից և համացանցից, այլև դրանց միջոցով մշակել տեղեկատվությունը:

Ելնելով մեր կողմից նախօրոք կատարված մանկավարժական գիտափորձի արդյունքներից {2}, ինչպես նաև պլանավորված հետազոտական աշխատանքներից, տեղեկատվական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման համար առաջարկում ենք գործունեության հետևյալ ձևերը՝

1. Ծանոթություն համակարգչի հետ՝ որպես տեղեկատվության հետ բազմակողմանի աշխատելու միջոց:
2. Տեղեկատվության հետ աշխատելու տեխնոլոգիաների տիրապետում,
  - տեղեկատվության որոնում աստիճանակարգված կառուցվածքներում և որոնողական համակարգերում,
  - տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և ընդհանրացում,
  - տեղեկատվության վերակառուցում (գրաֆիկականից՝ տեքստային, անալոգայինից՝ թվային կամ հակառակը և այլն):

3. Ձեռք բերված տեղեկատվության հանդեպ ստեղծագործական մոտեցման, կարևորի առանձնացման և հավաստիության գնահատման հմտության ձևավորում:
4. Ուսումնական խնդիրների լուծման համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հմտության ձևավորում:
5. Միասնական տեղեկատվական տարածքում տարբեր հայացքներ ունեցող մարդկանց հետ հաղորդակցման, երկխոսության ստեղծման հնարավորություն,
- հաղորդակցական և ինտելեկտուալ ընդունակությունների զարգացում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով:

Առաջնորդվելով ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կոմպետենտության նկատմամբ ժամանակակից պահանջներով՝ կարելի է առանձնացնել նրա մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության զարգացման հիմնական ուղիները՝

- աշխատանք մեթոդական միավորումներում, ստեղծագործական խմբերում, հետազոտական գործունեություն,
- նորարարական գործունեություն, մանկավարժական նոր տեխնոլոգիաների յուրացում, ուսուցման արդյունքների գնահատման նոր եղանակների, հսկողության նոր ձևերի ներդրում մասնագիտական գործունեությունում,
- սեփական մանկավարժական փորձի հեռարձակում ինտերնետ տիրույթում, ելույթներ գիտագործնական կոնֆերանսներում, ակտիվ մասնակցություն մանկավարժական մրցույթներին ու միջոցառումներին, հոդվածների և մեթոդական մշակումների տպագրում,
- ուսումնադաստիարակչական գործընթացում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների, ուսուցման ինտերակտիվ միջոցների կիրառում,
- մասնագիտական անընդհատ ինքնակատարելագործում, պարբերաբար հաճախում որակավորման դասընթացներին,
- ֆիզիկական լավ վիճակի պահպանում, շարժողական ընդունակությունների մշակում և շարժողական հմտությունների կատարելագործում:

Նշված ուղիների իրականացումը, մեր կարծիքով, նպաստում է գնոստիկական, կազմակերպչական, հաղորդակցական, տեղեկատվական, հետազոտական, շարժողական, նախագծային և ինքնակատարելագործման կոմպետենցիաների ձևավորմանը, որոնք ամբողջացնում են ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական-մանկավարժական կոմպետենտությունը:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կոմպետենտության ձևավորման գործընթացում կարևոր է հաշվի առնել թե՛ դասային, թե՛ արտադասարանական գործոնները, ուսուցիչների մտածելակերպը, տվյալ կրթական հանրության ավանդույթները, դասավանդողների և սովորողների փոխհարաբերությունների բովանդակությունը: Անհրաժեշտ է շարունակաբար բարձրացնել

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կոմպետենտության մակարդակը թե՛ բուհում՝ ուսումնառության տարիներին, թե՛ հետագա աշխատանքային գործունեության ընթացքում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դպրոցական ֆիզիկական դաստիարակության բովանդակության հիմնական մոդեռնացնողը ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչն է, հատկապես նրա պրոֆեսիոնալիզմը և կոմպետենտությունը կարող են ապահովել անհրաժեշտ արդյունքների ձեռքբերումը: Որպես հետևանք, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը դառնում է ֆիզկուլտուրային կրթության մոդեռնացված բովանդակության կրողը, մասնագիտական գործունեության արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանների կազմակերպիչը:
2. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչն իր մասնագիտական գործունեությունը պետք է կառուցի ժամանակակից պահանջներին համապատասխան՝ կիրառելով արդի նորարական տեղեկատվական և կրթական տեխնոլոգիաներ: Այսպիսով, ֆիզիկական կուլտուրայի ոլորտում ուսումնադաստիարակչական գործընթացի մոդեռնացման առաջնային դերը պատկանում է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչին:
3. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կոմպետենտության հիմնախնդիրը դիտարկվում է շարունակական կրթության շրջանակներում: Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում կիրառել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, մեթոդաբանական և տեխնոլոգիական նոր դիրքերից մոդելավորել ֆիզիկական դաստիարակության ուսուցման գործընթացը:
4. Ֆիզիկական կուլտուրայի յուրաքանչյուր դաս սովորողների համար պետք է լինի բաց, ճանապարհորդություն դեպի շարժումների հրապուրիչ աշխարհ, ուր դպրոցականները սկսում են ճանաչել իրենց օրգանիզմը, յուրացնում են շարժողական գործունեության տարածական, ժամանակային, դինամիկ, ուժային և ռիթմիկ բնութագրումները, սովորում են հեշտ կառավարել իրենց շարժումները, արդյունավետ լուծել տարբեր շարժողական խնդիրներ, համեմատել իրենց շարժողական հնարավորությունները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ., Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. մեթոդական ուղեցույց, Բարձրագույն կրթությունն ազգամվարական հետազոտությունների ազգային կենտրոն, Եր., Թասկ, ՍՊԸ, 2010, 110 էջ:
2. Ստեփանյան Ա.Գ., Համակարգչային տեխնիկայի ներդրման ուղիները ֆիզկուլտուրային կրթության գործընթացում, //Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, 2010, էջ 87-92:
3. Ստեփանյան Ա.Գ., Գաբրիելյան Հ.Հ., Հանրակրթական դպրոցում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բովանդակության և կառուցվածքի նորարական մոտեցումներ //Մանկավարժություն գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2011/2-րդ, էջ 12-21:
4. Ղազարյան Ֆ.Գ., Ստեփանյան Ա.Գ., Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի որոշ առանձնահատկություններ, Մանկավարժական միտք, N1-2, Երևան, 2010, էջ 65-69:
5. Ստեփանյան Ա.Գ., Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության բովանդակությունը, Մանկավարժական միտք, N 3-4, Երևան, 2017, էջ 212-218:
6. Պետրոսյան Հ.Հ. Կոմպետենտային մոտեցումը և մասնագիտական կրթության որակի ապահովումը: Մենագրություն, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2013, 264 էջ:
7. Белкин А.С., В.В. Нестеров. Педагогическая компетентность: учебное пособие.– Екатеринбург: Учебная книга, 2003.–188 с.
8. Слостенин В.А. Педагогика: учеб. пособие для вузов /В.А. Слостенин, И.Ф. Исаев, Е.Н. Шиянов; ред. В.А. Слостенин.–3-е изд.– М.: Академия, 2004.– 576 с.
9. Хазова С.А.Развитие конкурентоспособности специалистов по физической культуре и спорту в процессе профессиональной подготовки: Монография. – Майкоп, 2011. – 371с.
10. Шерин В.С. Модель формирования компетентности управленческой деятельности специалиста по физической культуре и спорту //Педагогика и психология.- 2011. - № 5. - с. 147-150.